ԱՄԵՆ ՏԵՂ ՀԱՅ ԵՄ, ԲԱՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Posted on September 17, 2009 by Keghart



Category: Opinions

Կարապետ Զաքարյան, **ՀՐԱՊԱՐԱԿ**,16 Սեպտեմբեր 2009

Երբ փոփոխված Սահմանադրության հոդված 11.3-ով նախատեսվեց, որ ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով, այս դրույթը բուռն վեճերի առիթ դարձավ: Թե ի՞նչ կերպ պետք է կարողանան ապացուցել, թե տվյալ անձը ազգությամբ հայ է, երբ նա ծնվել ու ապրել է արտերկրում, իսկ ցանկացած կեղծ գրառում կարող են անել մեր երկրի, մեղմ ասած՝ ոչ բարեկամները: Բայց դրան զուգահեռ, հանդիպում ենք նաեւ մյուս ծայրահեղությանը, որ ազգությամբ հայը չի կարողանում դա ապացուցել: Մասնավորապես, սփյուռքահայ Կարապետ Զաքարյանը Հայաստանի քաղաքացիություն ստանալու նպատակով այս օրերին Հայաստանում է գտնվում, սակայն, հայտնվելով տհաճ պատմության մեջ, հարցը չլուծված ու խիստ վիրավորված՝ պատրաստվում է մի քանի օրից լքել հայրենիքը:

Կարապետ Զաքարյան, **ՀՐԱՊԱՐԱԿ**,16 Սեպտեմբեր 2009

Երբ փոփոխված Սահմանադրության հոդված 11.3-ով նախատեսվեց, որ ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով, այս դրույթը բուռն վեճերի առիթ դարձավ: Թե ի՞նչ կերպ պետք է կարողանան ապացուցել, թե տվյալ անձը ազգությամբ հայ է, երբ նա ծնվել ու ապրել է արտերկրում, իսկ ցանկացած կեղծ գրառում կարող են անել մեր երկրի, մեղմ ասած՝ ոչ բարեկամները: Բայց դրան զուգահեռ, հանդիպում ենք նաեւ մյուս ծայրահեղությանը, որ ազգությամբ հայը չի կարողանում դա ապացուցել: Մասնավորապես, սփյուռքահայ Կարապետ Զաքարյանը Հայաստանի քաղաքացիություն ստանալու նպատակով այս օրերին Հայաստանում է գտնվում, սակայն, հայտնվելով տհաճ պատմության մեջ, հարցը չլուծված ու խիստ վիրավորված՝ պատրաստվում է մի քանի օրից լքել հայրենիքը:

"Ես միայնակ մարդ եմ՝ 72 տարեկան, ծնվել եմ Երուսաղեմում, 35 տարի է՝ ապրում եմ Հորդանանում: Այնտեղի ամենաճանաչված հոգեբույժներից եմ, մասնավոր կլինիկա ունեմ: Ինձ մոտ շատ հիվանդներ են գալիս նաեւ Մերձավոր ու Միջին Արեւելքից՝ ասելով, որ դուք՝ հայերդ, խելացի ազգ եք, ինձ էլ կոչում են "Արմանի դոկտոր": Սովորել եմ Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, Երեւանի բժշկական ինստիտուտում, Լիբանանի ամերիկյան համալսարանում: Դեռ երիտասարդ տարիքից, որտեղ որ եղել եմ, միշտ էլ ակտիվորեն զբաղվել եմ թե՛ քաղաքական, թե՛ հասարակական գործունեությամբ, իսկ սփյուռքի պարագայում դա նշանակում է զբաղվել գաղթօջախների հայապահպանության ու հայրենիքի օգնության խնդիրներով: Երբ Հայաստանում երկքաղաքացիության մասին օրենք ընդունվեց, շատ ուրախացա,

ասի՝ երթամ հայրենիք՝ քաղաքացիություն ստանամ: Սփյուռքում հիմա մի այնպիսի պրոպագանդա է գնում՝ "Արի Հայաստան" կարգախոսով, որ մտածեցի՝ ավելի լավ է Հորդանանում ունեցածս միջոցները հավաքեմ-գամ՝ կյանքիս վերջին տարիները հայրենիքում ապրեմ: Երեւանում Նալբանդյան փողոցում բնակարան եմ գնել դեռ 2001-ին: Մտածում էի, եթե անգամ այստեղ չաշխատեմ, Աստված ինձ ինչքան էլ կյանք տա, մեկ է՝ որքան էլ շռայլ ծախսեմ, վերջում էլի մի 500 հազար դոլար կմնա, որ տրամադրեմ մի մանկատան ու կյանքիս հրաժեշտ տամ:

Գնացի անձնագրերի ու վիզաների վարչություն: Հարցաթերթիկը լրացնելուց հետո այնտեղի երիտասարդ աշխատակիցն ինձ ասաց, որ գնամ-թուղթ բերեմ, որ հայ եմ: Երբ փորձեցի բացատրել, որ չեմ պատկերացնում, թե այդպիսի թուղթ ումից պիտի բերեմ, նա ինձ վրա սկսեց գոռգոռալ: Որքան մեծ էր զարմանքս, որ գրկաբաց ընդունելության փոխարեն ինձ փողոցային շան նման դուրս շպրտեցին: Ես հայ եմ իմ ամեն բջջով, ամեն ոսկորով, սակայն այդ երիտասարդ ոստիկանն ինձ պարզ հասկացրեց, որ այս երկրում ես ու իմ նմանները տեղ չունենք: Այստեղ հակասփյուռքահայ տենդենց եմ նկատում, մեզ չեն ընդունում: Գալիս ենք հայրենիքը կարոտած, մեկ-երկու ամիս մնում ենք ու սկսում Հայաստանն ատել: Ես աշխարհի շատ երկրներում եմ եղել, ապրել եմ Լիբանանում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում:

Ամեն տեղ ես հայ եմ, բացի Հայաստանից: Եթե իմ նման պատկառելի տարիքի ու անցած ճանապարհի մարդու հետ են այսպես վարվում, բա մնացածների հե՞տ ինչպես կվարվեն: Այս շոկն ինձ շատ բաների մասին ստիպեց մտածել, որ երկիրը լավ վիճակում չէ, պաշտոնյաներն անկիրթ են, չունեն ո՛չ բարոյականություն, ո՛չ հարգանք, ո՛չ պատիվ: Որքան մեծ եղավ զարմանքս, երբ այս միջադեպի մասին պատմեցի հայաստանցի իմ ծանոթներից մեկին, իսկ նա մտերմաբար խորհուրդ տվեց՝ ոչ թե Հորդանանի ունեցվածքս վաճառեմ, այլ՝ այստեղի սեփականությունս ու ընդմիշտ հեռանամ, քանի որ կոնֆլիկտ եմ ունեցել ոստիկանության հետ, եւ հետագայում կարող է լուրջ խնդիրներ ունենամ դրա պատճառով: Բացի դրանից, ես այլեւս չեմ պատրաստվում իմ գումարը տալ մի երկրի, որն ինձ հետ այսպես վարվեց:

Ես գիտակից մարդ եմ, հասկանում եմ, որ երկքաղաքացիության մասին օրենքը չպետք է սողանցք ծառայի, որպեսզի տարբեր երկրներից ներթափանցեն Հայաստան հայի անվան տակ եւ հեշտությամբ քաղաքացիություն ստանան: Չէ որ շատերի համար դժվար չէ ունենալ հայի ազգանունով անձնագիր կամ հայերեն խոսել, բայց իրականում հայ չլինել եւ միանգամայն այլ նպատակներով քաղաքացիություն ստանալ: Սա նաեւ ազգային անվտանգության խնդիր է, բայց այդ ստուգումները պետք է անեն կիրթ մարդիկ ու նրբանկատ ձեւով, որպեսզի չվիրավորեն մեր արժանապատվությունը",- իր խոսքն այսպես ավարտեց Կարապետ Զաքարյանը:

Երբ Ժիրայր Սեֆիլյանին չի տրվում ՀՀ քաղաքացիություն, դա առաջացնում է հսկայական թվով մեր հայրենակիցների զարմանքը, եթե չասեմ զայրույթը՝ թե

հայրենիքում եւ թե սփյուռքում: Սակայն ոչ պակաս վրդովեցնող է, որ սփյուռքից Հայաստան գալու մտադրություն ունեցող մեր հայրենակիցներին այսպես հիասթափեցնում ենք եւ օտարում հայրենիքից: